զոր հրամայեաց չինել ի պատճառս աղօթից ի փրկութիւն Հայոց» (էջ 9)։

Պատմիչներէն և դարձեալ աւանդութենէ կ'իմանանք թէ Ս. Հեղինէ դշխոն շինեց Բեթղեհէմի եկեղեցին Քրիստոսի Ծննդեան այրին վրայ, նոյնպէս Համբարձման լերան վրայ՝ այն տեղը ուրկէ Քրիստոս երկինք համբարձաւ. «Զի ի սաղայատակ առնել անդ զտաճարն՝ անհնար եղեւ շինողաց ծածկել քարամբ զերկու ոտնաչափ տեղիս, որպէս եւ ոչ զմիջնայարկն զնբերին զուղղանայեաց ի նոյն վայր կարացին ծածկել, որով յայսմիկ եղեւ ոտնատեղին եւ ամենապարհ վերելից Փրկչին ի պահու համբարձման»։

Հեղինէ շինած է նաև ուրիշ եկեղեցիներ Պաղեստինի մէջ, զոր օրինակ Գեթսեմանիի մէջ՝ Ս. Աստուածածնի գերեզմանին վրայ, Յովակիմ և Աննայի եկեղեցին, Գեթսեմանիի պարտէզի եկեղեցին և այլն և այլն (Լ. Վ. Ս. հատ. Գ. էջ 258)։

Ժ.Զ. դարու ձեռագիր Ցայսմաւուրքի մը (Տաչեան Ցուցակ Թ. 10) մէջ կը կարդանք (Թղ. 39ա.). «Տօն է Ս. Խաչին տօնին Յարութեանն և Գողգոթային, և այլ սրբութեանց։ Յետ գիւտի Ս. Խաչին հրամանաւ Հեղինեայ մօր թագաւորին շինեցան եկեղեցիք սուրբ Յարութեանն՝ որ ի Գողգոթա. և Ծննդեանն որ ի Բեթղեհէմ, և յայլ տնաւրինական Տեղիսն, ի Համբարձումն, և ի Գերեզման սուրբ Աստուածածնին, վերակացութեամբ Գրիգորի Լուսաւորչին»։

4. Հայ ուխտաւորի մը Ս. Տեղեաց նկարագրութիւնը (Ե. կամ Զ. դար). — Մովսէս Կաղանկատուացի պատմիչը (Է. դար) իր պատմութեան մէջ գրած է հայ անանուն ուխտաւորի մը Ս. Տեղեաց թանկագին նկարագրականը, որ է հետևեալը.